ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-18/8 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

ք. Երևան **«30» նոյեմբերի 2018թ.**
ժամը՝ 11:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝
ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության գնումների կազմակերպման պատասխանատու՝ Ա. Մեսրոպյան:

Հանձնաժողովի անդամներ՝
ԱԻՆ իրավական ապահովման և միջազգային պայմանագրերի վարչության օրենսդրության կատարելագործման բաժնի առաջատար մասնագետ՝ Հ. Ծատուրյան,
ԱԻՆ ֆինանսանտեսագիտական վարչության ֆինանսաբյուջետային բաժնի պետ՝ Ա. Մկոյան:

Հանձնաժողովի քարտուղար՝
ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության գնումների կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ՝ Ա. Եղիազարյան:

1. Ընդունել ի գիտություն.

1.1 ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի /Կարգ/ 19-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե /Կոմիտե/ հարցում է ուղարկվել ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-18/8 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների՝ «Մեծ Ծիածան», «Էկոմիքս» ՍՊԸ-ի և «Արման Կադալյան Վալերիի» Ա/Ձ-ի հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

1.2 Ղեկավարվելով Կարգի 19-րդ կետի 4-րդ ենթակետով՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին www.eauction.armeps.am համակարգով (Համակարգ) ծանուցվել է՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված՝ առաջարկվող ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը /ամբողջական նկարագրեր/:

Հանձնաժողովը որոշեց՝

1) Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասը՝ 1,2,3,4,5,7 և 8 չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ին, 6 չափաբաժնի մասով՝ «Էկոմիքս» ՍՊԸ-ին, իսկ 9 չափաբաժինների մասով՝ «Արման Կադալյան Վալերիի» Ա/Ձ-ին:

2) Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը՝ անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր:

3) Հաստատել ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-18/8 էլեկտրոնային աճուրդով ընթացակարգով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

4) Հրավերով սահմանված ժամկետում պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «Մեծ Ծիածան», «Էկոմիքս» ՍՊԸ-ներին և «Արման Կադալյան Վալերիի» Ա/Ձ-ին:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ **Ա. Մեսրոպյան**

Հանձնաժողովի անդամներ՝ _____ **Հ. Ծատուրյան**

_____ **Ա. Մկոյան**

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ **Ա. Եղիազարյան**